

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2020-5-5-Ա

ք. Երևան

20.08.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի օգոստոսի 20-ի նիստում քննարկեց 2020 թվականի մարտի 3-ին Միհրան Հարությունյանի կողմից ներկայացված՝ «Հոմ շին» ՍՊԸ ընկերության (Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. 48/27, AM) բողոքը «HOMESHIN SOLID BASE» (№20192297) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ նշանում ներառված և նշանի գերիշխող մաս կազմող «HOMESHIN» գրառումը, որտեղ «HOME»-ը անգլերենից թարգմանաբար նշանակում է տուն, իսկ «SHIN»-ը հայերեն «շին» (շինարարություն) բառի լատինատառ գրելաձևն է, հայտարկված 37-րդ դասի ծառայությունների համար հանդիսանում է նկարագրական բնույթի տարր՝ նշելով ծառայության տեսակը և ստեղծման նպատակը: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, մասնավորապես նկարագրական բնույթի տարրերի վրա, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով: Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ

ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 35-րդ դասի ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «ՇԻՆ ՀԱՌԻՍ» (Համլետ Եղիազարյան, ք. Երևան, Նար-Դոսի 75, բն. 125, N 27806 21.08.2018) համակցված ապրանքային նշանին: Կարգի 124-րդ կետի 1-ին ենթակետի, 130-րդ կետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները և ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններն ունեն իմաստային նմանություն, որը որոշվել է նշանների մեջ դրված նման հասկացությամբ, գաղափարով, այդ թվում՝ տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստով, այն է՝ հայտարկված համակցված ապրանքային նշանում ներառված «HOMESHIN» գրառումն ունի գրեթե նույն իմաստն ու գաղափարը, ինչ գրանցված համակցված ապրանքային նշան «ՇԻՆ ՀԱՌԻՍ» արտահայտությունը:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը մասնակի գրանցելու մասին՝ 35-րդ դասի «մեծածախ և մանրածախ վաճառք» ծառայությունների համար, քանի որ հայտատուն հակադրվող ապրանքային նշանի իրավատիրոջ կողմից ներկայացրել է նամակ համաձայնագիր: Միևնույն ժամանակ ներկայացրեց առաջարկ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն բողոքը մերժել 37-րդ դասի ծառայությունների համար:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես չառարկեց:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

Միհրան Հարությունյանի կողմից ներկայացված՝ «Հոմ շին» ՍՊԸ ընկերության բողոքը մասնակի բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչել և «HOMESHIN SOLID BASE» (No20192297) ապրանքային նշանը գրանցել 35-րդ դասի «մեծածախ և մանրածախ վաճառք» ծառայությունների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԽՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ